ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/105

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 25.10.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ս.թ. հոկտեմբերի 4-ին մաքսային բրոքերի ծառայությունների ձեռքբերման նպատակով հրապարակվել է գնանշման հարցման հայտարարություն և հրավեր, որին մասնակցության դիմում է ներկայացրել նաև «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն: Վերը նշված ընթացակարգին մասնակիցների հայտերի գնահատման ընթացքում

թույլ են տրվել խախտումներ, ինչի հետևանքով խախտվել են «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի շահերը:

Բողոքի առարկան.

Սույն թվականի հոկտեմբերի 18-ին տեղի ունեցած «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ՝ Ընթացակարգ/ մասնակցության հայտեր են ներկայացրել թվով հինգ ընկերություններ, որոնցից երկուսի հայտերը սահմանված կարգով կազմված կամ ներբեռնված չեն եղել, ինչը տեսանելի է էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող armeps.am համակարգում, որի «հայտեր» բաժնում տվյալ ընթացակարգի «հայտեր» սյունակում «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների անվանումների դիմաց բացակայում են վերջիններիս կողմից ներբեռնված հայտերը, մինչդեռ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «Վար լայն» ՍՊԸ-ն:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 46-րդ հոդվածի 1-ին մասիհամաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են հետևյալ կանոնները.

1) շահագրգիռ մասնակիցներին մատչելի են հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները.

2) հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանները.

ա. հնարավոր է հստակ որոշել հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը,

բ. նախքան տվյալների փոխանցման համար սահմանված ժամկետները՝ փոխանցված տվյալները մատչելի չեն ոչ ոքի համար,

գ. այն դեպքում, երբ խախտվել է փոխանցված տվյալների մատչելիության արգելքը՝ հնարավոր է հստակ պարզել չարտոնված մուտքը,

դ. ստացված տվյալների բացման ժամկետները կարող են սահմանել կամ փոփոխել միայն լիազորված անձինք,

ե. գնումների ընթացակարգի տարբեր փուլերում՝ ստացված տվյալներին մուտք գործելը հնարավոր է առնվազն երկու լիազոր անձանց (համակարգերի) համաժամանակյա գործողությամբ և միայն սույն կետի համաձայն սահմանված ժամկետից հետո:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի համաձայն՝ համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից: Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

Ինչպես երևում է վերը նշված իրավանորմերի վերլուծությունից, էլեկտրոնային ձևով գնումների իրականացման ընթացքում պարտադիր պայման է, որպեսզի տեղեկատվությունը հասանելի լինի բոլոր մասնակիցներին, հստակ հնարավոր լինի որոշել հայտերի ստացման ժամն ու ամսաթիվը, իսկ հայտերի բացումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի բացող անդամների կողմից: Տվյալ պարագայում խախտվել են վերը նշված իրավանորմերը, մասնավորապես, հնարավոր չէ հստակ ամրագրել «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերի ներկայացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը, որը հավաստվում է պատվիրատուի կողմից ընթացակարգի մասնակիցների սույն թվականի հոկտեմբերի 15-ին ուղարկված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018թ.

հոկտեմբերի 11-ի թիվ 2 արձանագրությունից, որի 5-րդ կետով «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատվել են անբավարար, քանի որ հայտերը ներբեռնված չեն: Չնայած այդ հանգամանքին, ընթացակրգի գնահատող հանձնաժողովի կողմից չեղյալ է համարվել այդ արձանագրությունը և 2018թ. հոկտեմբերի 19-ին մեր ընկերությանն ուղարկվել է մեկ այլ արձանագրություն, որով «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատվել են բավարար՝ պատճառաբանելով, որ վերը նշված ընկերությունների հայտերը չեն երևացել համակարգում, սակայն տեսանելի են եղել գնահատողների էջերում, իսկ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի կողմից կցված չի եղել թիվ 1 հավելվածը, որը շտկվել է:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում չէր կարելի բավարար գնահատել վերը նշված հայտերը՝ հետևյալ պատճառներով.

- Հնարավոր չէ որոշել «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերի ստացման ժամը և օրը, ինչը հավաստվում է այն հանգամանքով, որ չեն պահպանվել էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի 17-րդ կետի պահանջները.

- Հայտերը սահմանված կարգով կազմված չեն եղել, ինչի մասին վկայում է այն փաստը, որ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված չի եղել թիվ 1 հավելվածը, իսկ բոլոր մասնակիցները գիտեն, որ համակարգը թույլ չի տալիս ներբեռնել հայտի փաթեթը, եթե որևէ դաշտ լրացված չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով՝ Բողոքներ քննող անձին խնդրում ենք պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար մաքսային բրոքերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին մերժել «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը և դադարեցնել ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Վար լայն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Տիրան Լաճիկյանը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 29.10.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստը նշանակված է եղել ս.թ. հոկտեմբերի 11-ին: Հոկտեմբերի 11-ը և 12-ը ոչ աշխատանքային օրեր հայտարարվելու պատճառով հայտերի բացման նիստը տեղափոխվել է հաջորդ աշխատանքային օրը՝ 15.10.2018թ.: Գնահատող հանձնաժողովի բացող անդամները սահմանված կարգով 15.10.2018թ. ժ. 14:00-ին բացել են հայտերը:

Armeps.am համակարգի «հայտեր» դաշտում «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը չեն երևացել, իսկ «Սեյֆվեյ» ՓԲԸ-ի հայտին կից ներբեռնված չեն եղել հրավերով սահմանված որոշ փաստաթղթեր, որոնց շտկման նպատակով կասեցվել է հայտերի բացման նիստը, որը արձանագրվել է և նույն օրը՝ 15.10.2018թ. ուղարկվել է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

Նույն օրը հանձնաժողովի անդամները հայտնել են, որ Armeps.am համակարգի իրենց էջերում առկա են «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերի՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

Հաջորդ օրն այդ մասին հեռախոսազանգով տեղեկացվել է Armeps.am համակարգի ադմինիստրատորին, ինչի արդյունքում Armeps.am համակարգի «հայտեր» դաշտում կատարվել է լրացում, և «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը երևում են Armeps.am համակարգի «հայտեր» դաշտում:

Ելնելով վերոգրյալից 15.10.2018թ. վերսկսվել է հայտերի բացման նիստը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 14-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը: Նույն որոշման 26-րդ կետի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի՝

9) անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար.

10) յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը՝ ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:

Հանձնաժողովի անդամները գնահատել են իրենց էջերում ներբեռնված փաստթղթերը և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Վար լայն» ՍՊԸ-ին, ինչպես նաև չեղյալ են համարել 15.10.2018թ. մասնակիցների էլեկտրոնային փոստերին ուղարկված հայտերի բացման կասեցված նիստի թիվ 2 արձանագրությունը, որում անբավարար են գնահատվել «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը:

Ելնելով վերոգրյալից «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն գտնում է, որ «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.10.2018թ. ժամը 14:00 նիստի թիվ 2 արձանագրությունը, 17.10.2018թ. ժամը 15:00 նիստի թիվ 3 արձանագրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 29.10.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար Մաքսային միջնորդի՝ բրոքերի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 11.10.2018թ. ժամը 14:00 նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հինգ մասնակից, որոնց թվում՝ «Ֆասթ Ինտերերվիս» ՍՊԸ-ն և «Վար լայն» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատվել են անբավարար, քանի որ վերջիններս ներբեռնված չեն:

Այնուհետև, 11.10.2018թ. ժամը 14:00 նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով հանձնաժողովը որոշել է «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատել բավարար, իսկ «Ֆասթ Ինտերերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ արձանագրվել է, որ վերջինիս հայտով ներբեռնված չէ Հավելված 1-ով ներկայացվող գնանաշման հարցմանը մասնակցելու դիմումը:

Նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովն առաջարկել է «Ֆասթ Ինտերերվիս» ՍՊԸ-ին ներկայացնել գնանաշման հարցմանը մասնակցելու դիմումը, և արձանագրել է, որ Armeps.am համակարգի «հայտեր» դաշտում «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը չեն երևացել, սակայն հայտերը գնահատողների էջերում փաստաթղթերը կցված են եղել, ուստի Հանձնաժողովն առաջարկել է 15.10.2018թ. էլ. փոստով ուղարկված արձանագրությունը համարել չեղյալ:

Հանձնաժողովի 17.10.2018թ. ժամը 15:00 նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատվել են բավարար:

Նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկած գինը կազմել է 2,872,200 ՀՀ դրամ, «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած գինը կազմել է 2,903,250 ՀՀ դրամ, իսկ «Վար լայն» ՍՊԸ-ի կողմից առաջարկած գինը կազմել է 2,175,000 ՀՀ դրամ (բոլոր գները նշված են առանց ԱԱՀ):

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Վար լայն» ՍՊԸ-ն Հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ն՝ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը 23.10.2018թ. ժամը 15:00 նիստի թիվ 4 արձանագրության 5-րդ կետով որոշել է փաստաթղթերի գնահատման արդյունքում «Վար լայն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի -ի ներկայացուցիչը հայտնեց, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակիցների հայտերի գնահատման ընթացքում թույլ են տրվել այնպիսի խախտումներ, որոնց հետևանքով խախտվել են «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի շահերը: Մասնավորապես, մասնակցության հայտեր ներկայացրած թվով հինգ ընկերություններից երկուսի՝ «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը

սահմանված կարգով չեն ներբեռնվել www. armeps.am համակարգում, ինչն ապացուցվում է այն հանգամանքով, որ վերը նշված հայտերը տեսանելի չեն եղել էլեկտրոնային գնումների համակարգի համապատասխան բաժնում: Բողոքաբերի մոտ տարակուսանք է առաջացրել այն փաստը, որ թեև ընթացակարգի «հայտեր» դաշտում բացակայել են վերջիններիս կողմից ներբեռնված հայտերը, ինչը և արձանագրվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, սակայն արդեն իսկ հաջորդ արձանագրությամբ Հանձնաժողովը չեղյալ է համարել նախորդ արձանագրությամբ կայացված որոշումները, և Բողոքաբերին անհասկանալի հիմնավորմամբ «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը գնահատել է բավարար, իսկ «Վար լայն» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից: «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացուցչի խոսքով, հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջը, այն է՝ հնարավոր չէ հստակ որոշել «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի բացման և գնահատման թափանցիկության սկզբունքը:

Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ուղղված իր դիրքորոշման մեջ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստը նշանակված է եղել ս.թ. հոկտեմբերի 11-ին: Հոկտեմբերի 11-ը և 12-ը ոչ աշխատանքային օրեր հայտարարվելու պատճառով հայտերի բացման նիստը տեղափոխվել է հաջորդ աշխատանքային օրը՝ 15.10.2018թ.: Գնահատող հանձնաժողովի բացող անդամները սահմանված կարգով 15.10.2018թ. ժ.14:00-ին բացել են հայտերը, ընդ որում, armeps.am համակարգի «հայտեր» դաշտում «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը չեն երևացել: Սակայն, նույն օրը հանձնաժողովի անդամները հայտնել են, որ armeps.am համակարգի իրենց էջերում առկա են «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերի՝ հրավերով սահմանված փաստաթղթերը, ինչի մասին Պատվիրատուն հեռախոսազանգով տեղեկացրել է armeps.am համակարգի ադմինիստրատորին: Արդյունքում Armeps.am համակարգի «հայտեր» դաշտում կատարվել է լրացում, և «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը դարձել են տեսանելի armeps.am համակարգի «հայտեր» դաշտում:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի՝

-3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

-17-րդ կետի համաձայն՝ համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից: Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝

նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանը, այն է՝ հնարավոր է հստակ որոշել հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ղեկավարվելով Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով՝ «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Բողոքներ քննող անձը 05.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնելով, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 5 ընկերություններ, որոնցից երկուսի՝ «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերը սահմանված կարգով կազմված կամ ներբեռնված չեն եղել, ինչը երևացել է նաև էլեկտրոնային գնումների Armeps համակարգում, որի «հայտեր» բաժնում «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների անվանումների դիմաց բացակայել են վերջիններիս կողմից ներբեռնված հայտերը: Բողոքներ քննող անձը խնդրել է տրամադրել «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Ֆասթ Ինտերերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների կողմից ներբեռնված հայտերի վերաբերյալ եզրակացություն:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 11/10/2018թ., 19/10/2018թ. Պատվիրատուի և հիշյալ գնման գործընթացի մասնակիցների կողմից ստացվել են ահազանգեր առ այն, որ «armeps.am» կայքի «Հայտեր» բաժնում վերոգրյալ ընթացակարգին ներկայացված հինգ մասնակիցներից երկուսի՝ «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար Լայն» ՍՊԸ-ների հայտերի «zip» ֆայլերը տեսանելի

չեն: Նշված խնդիրը 19/10/2018թ. ժամը 11:14-ին ներկայացվել է համակարգի ծրագրային սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, որի կողմից 24/10/2018թ. ժամը 20:38-ին այն լուծվել է և հայտերը դարձել են տեսանելի:

Լիազորված մարմինը հայտնել է նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պատվիրատուի կողմից հիշյալ ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման շրջանակում 17/10/2018թ. ժամը 16:30-ին գեներացվել է «Գնահատման հաշվետվություն» MS excel ֆայլը, որտեղ առկա է տեղեկատվություն ինչպես հայտեր ներկայացրած մասնակիցների, այնպես էլ ֆայլերի տեսակների, դրանց գնահատման արդյունքների և գնային առաջարկների մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ հիշյալ մասնակիցները սահմանված ժամկետներում ներկայացրել են հայտերը, որոնք հասանելի են եղել գնահատող հանձնաժողովի անդամներին և գնահատվել են վերջիններիս կողմից: Գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները 19/10/2018թ. հրապարակվել են procurement.am կայքում: «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի հայտը համակարգում բեռնվել է 10.10.2018թ. ժամը 23:39-ին, իսկ «Վար Լայն» ՍՊԸ-ի հայտը՝ 10.10.2018թ. ժամը 13:18-ին:

Գրությանը կից ներկայացվել է նաև համակարգից արտահանված «Գնահատման հաշվետվություն» MS Excel ֆայլի տարբերակը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «armeps.am» կայքի «հայտեր» բաժնում Ընթացակարգին ներկայացված՝ «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար Լայն» ՍՊԸ-ների հայտերի «zip» ֆայլերը տեսանելի չեն եղել:

- հանձնաժողովի գնահատող անդամների էջերում առկա են եղել «Ֆասթ Ինտերսերվիս» և «Վար լայն» ՍՊԸ-ների հայտերի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- Պատվիրատուի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման շրջանակում 17.10.2018թ. ժամը 16:30-ին գեներացվել է «Գնահատման հաշվետվություն» MS excel ֆայլը, որը պարունակում է տվյալներ հայտեր ներկայացրած մասնակիցների, ֆայլերի տեսակների, դրանց գնահատման արդյունքների և գնային առաջարկների մասին:

- «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի հայտը համակարգում բեռնվել է 10.10.2018թ. ժամը 23:39-ին, իսկ «Վար Լայն» ՍՊԸ-ի հայտը՝ 10.10.2018թ. ժամը 13:18-ին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի և «Վար Լայն» ՍՊԸ-ի հայտերը համակարգում բեռնվել են մինչև հրավերով նախատեսված՝ հայտերի

բացման վերջնաժամկետը՝ հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան, ընդ որում, հստակ հայտնի է հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի և «Վար Լայն» ՍՊԸ-ի հայտերը սահմանված կարգով կազմված չեն եղել, ինչի մասին վկայում է այն փաստը, որ «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված չի եղել թիվ 1 հավելվածը, հետևաբար, դրանք չէին կարող Հանձնաժողովի կողմից գնահատվել բավարար, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Կարգի 41-րդ կետը նախատեսում է հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների (բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան) մեկ աշխատանքային օրում շտկելու մասանակցի իրավունքը, որը և տվյալ դեպքում «Ֆասթ Ինտերսերվիս» ՍՊԸ-ի կողմից իրացվել է:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ